Ախալցխա, 19 Մայիսի

Հայկական տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի յոբելեանները քաղաքացիս տօնելու համար, անցեալ վերջերս տեղում, տեղական Դր. Սիրոզնեի Ընկ. վարչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցան մի քանի խօսն նախապատրաստական ժողովներ, որտեղ բացի Դրամատիկականից մասնակցում էին Կ. Հ. Բ. Ընկ. տեղական ճիւղի, Հայ Կանանց Բարեգ. Ընկ. վարչութիւնները, երկսեռ դպրոցների հոգաբարձուները, վիճակիս փոխանորդը, մի քանի ուսուցիչներ և այլ անձինք։

Միայն հայոց դպրոցների ուսուցչ. խմբերն էին, որ միջոցներ էին մասնակցելու այս համազգային տօնին և ուսուցիչներից մասնակցեցին մի քանիսը միայն ազատ կամքով։ Մշակելով տօնակատարութեան ծրագիրը, յիշեալ խումբ ժողովը իր միջից ընտրեց մի գործադիր մարմին 9 հոգուց բաղկացած այդ յոբելեանը գլուխ բերելու համար նշանակված օրին։

Սակայն նշանակված օրը հանդէսը տեղի չունեցաւ մեզ անյայտ պատճառով. լսեցինք, որ գործադիր մարմինը ինքնագլուխ յետաձգել էր։

Ամենայն իրաւամբ սպասում էինք, որ նրանք այդ յետաձգման պատճառների մասին նախօրօք իրենց ընտրած խումբ ժողովին տեղեկութիւն տային. սակայն ի զուր։ Գործադիր մարմինը ինքն իրան տէր ու տնօրէն նկատելով, այլ ևս չէր ճանաչում իրան ընտրող մարմիններին և ինքնիշխան ինչ որ ուզում կարգադրում ու որոշում էր. և այսպէս. գաղտագողի, ապրիլի 28-ին, կառավարման դպրոցում կատարվում է այդ համազգային տօնը, առանց նախապէս տեղեկացնելու իրան ընտրողներին, որոնցից շատերը այդ օրը հանդիսատոնը նշատած են եղել։ Այդ մասին մենք պատահմամբ լսեցինք և շատ զարմացանք, թէ սա ինչ խաղ է։ Ուշէին վերադրենք այս վարմունքը. նրանց տպաւորութիւնը թէ եսասիրութեանը, որը սովոր է տուել իրանց ընտրողների միջնորդութեան զգացողութեան ու հիասթափման։ Դեռ մի կողմը թողնենք, թէ այդ հանդէսը օրքան անգամ է անցել շնորհիւ մեր գործադիր մարմնի թուլութեան. բայց մեթէ այդ ամենատարբական պարտականութիւնը նրանք չէին հասկանում, մեթէ չէին ըմբռնում, որ իրանց ընտրողների ծրագրից շեղել նրանց ոչ ոք լիազորութիւն չէր տուած։ Ցաւալի է։

Խառն ժողովի անդամ

Լեոն Հէպէպեան